աղէտը՝ դժբախտութիւնը կատարեց. այլա-
դաւան Հայերի մէջ հաստատուեց եղբայրական
համերաշխութիւն, միութիւն: Եւ ինչի՞ համար
էին հալածում Հայերը միմեանց. կրօնական
համոզումների համար: Բայց այդ շատ սխալ է
եւ ահա ինչ պատճառով:

Կրօնը անհատական խղճի ազատութեան
գործ է. ուրեմն մենք չպէտք է գործ ունենանք
նրա հետ եւ դիպչինք նրան: Ամէն մարդ պէտք
է ազատ լինի իր Աստուածն իր համոզմանը հա-
մեմատ պաշտել: Շատ հասկանալի կը լինէր,
եթէ դուք հալածէիք բողոքական եւ կաթուղի-
կեայ Հային ոչ թէ հաւատի, դաւանութեան
համար, այլ եթէ նա ուրանում էր իր ազգայ-
նական պայմանները, այն է՝ իր լեզուն, պատ-
մութիւնը, անցեալը, հայութեան ընդհանուր
ապագան. հալածեցէք բողոքական, կաթուղիկեայ
քարոզիչներին, եթէ նրանք աշխատում են հայ
մատաղ սերնդի սրտից ջնջել ազգայնութեան
գաղափարը, բայց մի հալածէք նրանց, եթէ
նրանք համոզուած լինելով, որ քրիստոնէական
կրօնի այս կամ այն դաւանութիւնն կամ ձեւն
աւելի ճշմարիտ է, աշխատում են այդ համոզ-
մունքը տարածել եւ ուրիշների մէջ. այդտեղ՝
շատ շատ՝ զայրացէք եւ պախարակեցէք հայ-
լուսաւորչական հոգեւորականութիւնը, որ պոր-
տաբոյծ, անգործ կեանք վարելով, չէ կարողա-
նում մրցել այլադաւան հոգեւորականների
հետ եւ բարոյական ազդեցութիւն գործել իր
հօտի վրայ: